



1843-1895 ՀԱՏՈՐ ԾԳ ԱՊՐԻԼ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳՐԱԴԻ ՄԻ ՊԱՐԾԱԿԵՐԷՆ ԲԱՌԵՐ Ի ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԵՂԻՇԷԻ

(Տես յ'էջ 49)

4

Երան եւ Տաներան, ուղղելի՛

Երան եւ Աներան.

« Միհրներսեհ վգրուկ հրամատար Երան եւ Տաներան », և այլն, էջ 41: Միհրներսեհ երկու պաշտօնական տիտղոս ունէր. վգրուկ ֆերմատար Երան ու Աներան, կամ վգրուկ հեզարպետ Երան ու Աներան:

Առաջինը կը գործածէ ինքն իսկ Միհրներսեհ՝ այն նամակին ճակատը՝ զոր գրեց Հայոց, մագդեզն դէնի կոչելու համար զնոսա : — վգրուկ կամ *Vouzourk* է « մեծ, աւագ ». նոր պարսկերէն՝ *Bouzourk*. *Vouzourkan* « մեծամեծք, աւագանի »: Ածականը յետոյ գոյական անուն ալ եղաւ իբրեւ վէզիր՝ որ վազարիի արաբացեալը կ'երևի:

Մասուդի՛ արաբացի պատմագիր ժ գարու՛ ասէ, թէ Մովսէսեան մովսէսէն ետքը Պարսից պետութեան բարձրագոյն պաշտօնէայն

Պիզիրձ ֆերմատարն է ¹, որ Թարգմանի « աւագ հրամատար », կամ « աւագ հրամանատար » ²: Ընդհանրապէս Մովսէսեան մովսէսէն նախաթոռութիւն ունեցած են միւս ամէն նախարարաց վրայ, սակայն հայ և օտարագոյի պատմիչք միարան կը վկայեն, թէ վաւմայ և որդւոյն՝ Յազկերտի (Ի տոնենը՝ առաջին բարձր Միհրներսեհին էր):

Եպիսկոպոսունք իրենց պատասխանւոյն՝ ինչպէս և Եղիշէ՝ պատմութեանը մէջ, « մեծ հազարապետ » տիտղոսը կը գործածեն. Տաւարի ալ կ'ըսէ, թէ Միհրներսեհի Պարսից մէջ ամէնէն աւելի հանրածանօթ պատուաւ նունը հազարպետ էր: Արդ, հազարապետ աւունդ թէ և զինուորական աստիճան մը ցուցանէ, բայց յայտ է ի պատմութիւնէ, թէ

1. Հատ. Թ. էջ 333:

2. Պարսկերէն ֆերման գրի ևս ֆերմ, հայերէն՝ աւանջը հրաւոյ բառէ շինուած են. իսկ բարդութիւնք՝ հրաւանէ. վառն ուրդ « հրամատար » զարկաբանութիւն կ'երևի:

քաղաքական աւագագոյն պաշտօնատարն էր, որ ամենայն իշխանութիւն կը վարէր յանուն արքայի։ *Chiliarchum, qui secundum imperii gradum tenebat*. Կոռն. Նիպ. Գլ. Գ.։

Վզուրկ՝ մեր գրչագրաց մէջ, Վզրրկ կամ Վզրուկ ալ գրուած կայ. բայց ընտրելին է Վզուրկ։

Երան ու Աներան. այս է « Արեաց. և Անարեաց », կամ « Արիք և Անարիք ». քանզի պարսկերէն՝ յոգնակի օտականը նոյն է ընդ յոգնակի ուղղականին։ Սասանեան արձանաւորութեանց և դրամոյց վրայ՝ պահլավիկ նշաւնագրօք, և Պաղանդ մատենից մէջ՝ պահլաւ, լիկ կամ արաբացի տառիւք՝ գրի։ *انجلى*,

انجلى, որ արդի ընթերցմամբ կ'արտասանի իրան ու Անիրան. բայց շատ օրինակներով յայտ է թէ *ع* տառիւ բացատրուած ձայնաւորը՝ բառից մէջ տեղը է կը հնչուէր. *ինչ* պէս որ մինչ ցայժմ *چند*, *զե*, և *چند*, կըսէին, կը կարդացուին *ձօ* և *նօ*։ Եղիշէի համօրէն տպագրաց մէջ, ի բաց առնելով զԱնձեւացեացն՝ Երան և Տաներան կը գրուէին, որ բացարձակապէս վրիպակ է գրչագրի. գուցէ եւ կամ ու շաղկապը տ կարդացուած ըլլայ յօրինակողաց։ Մնաց որ այդ բաղաւայնից բացասական մասնիկ համարել օրպէս ի տօնի, տօնի, անհնար է. վասն զի անհրաժեշտ է ունի զիւր բացասականը որ է ան, Եղիշէ աստանօր Միհրնեսի կաշտօնական

1. Ասպէս եւս « մեք » գրի *مک*. Եւս « միամիտ » գրի *مجت*. Հրուդեան արդէն Երա՛ *عرا*. Հաւանօրէն Սասանեանց ատենը Պարսկից ալ ունէին մեր ձայնաւորը, զոր յետ ժամանակաց փոխեցին իբ, ինչպէս որ Հայոց մէջ մասն ալ այսօր այդ երկու ձայնաւորները չի զանազաներ բառից մէջ տեղը։ Հա՛ւանապատի երկարաբառ արձանագրութեան 4-րդ տառի զ-ը կըսուած օրիւնակին մէջ Արեւիկի Անօրեան գրուած է, որ նոյրերէնի բողոքողին նման է։

2. Մարթէ եւրիշ պատեաւ մի տալ այդ վրիպակիդ, Անօրեան յետ ժամանակաց պարսկերէնէ ի բաց թօթափեցաւ, և փոխանակ Երան աւ անօրեան տառով։ Ֆիրտէվիշէի ի վեր Պարսկից իրան աւ թուրքաւ տառցին։ Անօրեան ճանդիպեցաւ ինչ որ ճանդիպեց Եր Քրիշտիւր և Դոմիթի բառից։ Եղիշէի գրչագրից չնազանդելով այդ կիւն առնաւ նազկուրթիկը նոր պարսկերէնով մեկնելու ուղեկին և կարճ մեղով որ թուրքի իրանէ զանազանօրք ի կամ ք բաւ զանայն է՝ Անքարի սկիզբը ք տեղափոխին։

անունը պարսկերէն թրականօրեամբ և գրեալ է պարսկերէն թառնով կը դնէ. և երբ այն՝ քան գրչագրի վրիպակը ուղղուած են ներկայ տպագրաց մէջ, այլ ևս ներելի չէ աւելորդ խղճամտութեամբ պահել զբաղաձայնդ հակառակ համօրէն արձանագրութեանց, դրամոց և մատենից։ Վասն որոյ ասկէ վերջը ի լոյս հանուելու տպագրաց մէջ փափագելի է տեսնել որպէս յԱնձեւացեաց օրինակի,

« Միհրնեսի Վզուրկ հրամատար Երան և Աներան », և այլն. որ թարգմանի՝ Միհրնես սեհ Վզուրկ հրամանատար Արեաց և Անարեաց։

5

Մովսն Ռանդերձապետ, ուղղելի՛ Մովսն

Անդարձապետ։

« Եւ հրամայեաց ևս (Յաղկերտ) Դենշաւհոյ երկուս ևս ընկերակիցս օգնականս յաւագ զօրծակալացն, զՋնիկանն՝ որ էր մայպետ արքունի և զՄովսն հանդերձապետ ի ձեռանէ մովպետան մովպետի »։ Եղիշէ, էջ 283 և 291։

« Ես գրեմ և ցուցանեմ ի Դուռն մովպետան մովպետի և դերանդարձապետի և մեծ հազարապետին »։ Եղիշէ, էջ 106։

Բաւանդայ մէջ ալ կը գտնենք՝ մոգաց անդերձապետ, զոր Շապուհ կը խրկէ Արշաւայ դէմ զօրօք բազմօք, և Սակստան անդերձապետ, որ է անդերձապետ Սագաստան նահանգի։

Սասանեան Արտաշրի ընծայեալ Քարնամաք անուն պահլաւիկ մատենին մէջ ալ՝ *andarzpati aspadrakān*, որ թարգմանի « անդարձապետ այրուծիոյ »։

Սուրբ գրոց թարգմանիչքն դնեն « Հանդերձապետ », (տես թագ. Գ. ԺԶ. 9. — Եղի Ա. Բ. 12. — Մակ. Բ. Գ. 7). բայց յայտ է թէ սովաւ իմանային « Հազարապետ »։ « Գնա դու և մուտ ի գիւան անդր՝ առ Սոմնա հանդերձապետ և աստացես նա... տաց ի ձեռս (այլոյ) զհազարապետութիւնդ ք »։ (Եսայի ԻԲ. 15.)

Եղիշէի « դեր-անդարձապետ » ին առաջին վանկը դեր եթէ վերջնենք, որ բառերու

սկիզբը թէ հայերէնի և թէ պարսկերէնի մէջ (յժ) կը նշանակէ փոխանակ, երկրորդ, 8028, կ'ունենանք անդարձապետ, որ նոյն է Առտաշի փարեանաքին մէջ տեօնուածին հետ։ ուրիշ տեղ դրուած հանդերձապետն ալ յաճախ գրուած է « անդերձապետ » ։

Ահա բառ մի՝ որ հայ մատենագրաց սովորական ուղղագրութեանը եթէ նայինք, հայերէն է, կազմեալ « հանդերձ, հանդերձան » բառէ. և պէտք է նշանակէ պաշտօնեայ մը իբրև Օսմանցոց Լավագէտ-պաշտն կամ Խաֆրան-աղապարն՝ իսկ եթէ Եղիշէի դեր-անդարձապետին և Փարսամաքի նայինք, պարսկերէն բարբոթիւն մի է *andaz* = անդառճ բառի Պայց որովհետև Եղիշէի, Բուզանդայ և Փարսամաքի մէջ յիշուածները Պարսից տէրութեան մէկ պաշտօնատարն է, քննենք զայն իբրև պարսկերէն անուն, և տեսնենք թէ ինչ էր նորա պաշտօնը։

Նախ հաստատենք որ « Մովան անդարձապետ » է մոգաց անդարձապետ » . քանզի մով է մոգ, որոյ յոգնակի ուղղական և սեռականն ալ կ'ըլլայ՝ մովան. ուստի մովան չէ յատուկ անուն այլ հասարակ յոգնակի սեռ. այսինքն « մոգաց » ։ Պաշտով անդարձապետի, է պարսկերէն անդարդ՝ *յճձ*, խորա, խորհուրդ. կտակ, գիր կտակի, բարագրութիւն, պատմութիւն, գիր, գրպութիւն, մատենան Պազանդ գրոց մէջ *andardzinidan*՝ խրատել, ուսուցանել, առաջնորդել (Տես Պ. Ռէստի Մայն-խրատոր)։ Հայերէն ալ ունիմք « անդարձ », այլ միայն « կտակ » նշանակութեամբ։ Ուստի անդարձապետ՝ նշանակելու է խորհրդապետ, *Conseiller* կամ ինչպէս որ պիտի տեսնուի ստորեւ, աւելի պատշաճապէս՝ զըզրապետ, պաշ քնարիպ . ումանք ալ մենինն՝ « ուսուցիչ », բայց բառին կազմութեանը նայելով շատ յարմար չի թուիր մեզ։

1. Թէ Եղիշեայ և թէ Փարպեցոյ վըկայութենէն գիտեմք, որ Մովան կամ մոգաց անդարձապետը մոգպետ մի էր, և պաշտօնեայ մովպետան մովպետին հրամանին տակ. « Մովան անդարձապետ ի ձեռնանէ մովպետան մովպետի » ։ Սա էր ուրեմն դպրապետ-խորհրդապետն Մովպետան մովպետի և հասնաօրէն ընդհանուր տեսութիւն և կառավարիչ Գեհնպետի գրան, զոր ոչ միայն նկատելու է

իբրև մոգուց և կրօնական խնդրոց բարձրագոյն աստեան, այլ և պաշտօնարան արդարութեան և հասարակային կրթութեան։ Այդ պաշտօնատարիդ պարսկերէն կ'ըսուէր՝ մովան անդարձապետ ։

2. Անդարձապետ Սագաստանի. Հերոդոտ Պարսից վրայ խօսած ատենը կ'ըսէ (Գիրք Գ. 381) . թէ մէջ մի սատրապի քով պաշտօնեայ մի կայ, որ « դպրապետ արքունի » կը կոչուի, բայց անոր պարսկերէն անունը չի տար։ Այդ դպրապետները արքայից արքային ամենէն հաւատարիմ անձինքներէն և ուղղակի Թագաւորէն կ'ընտրուէին. և անոնց միջոցաւ Սատրապից լիազօր իշխանութիւնը հսկողութեան տակ առնուած էր։ Շարդէն որ Ժիշ դարուն ճանապարհորդեր և բաշդում տարինէր բնակեր էր ի Պարսս, կ'ըսէ. (Հատ. Գ. էջ 302)։ Շարճ երեք պաշտօնատար կարգած է ամեն մէկ կուսակալի քով. ասոնց մէկը վագանուիս² (տեղեկագրող) պաշտօն ունի, կուսակալին ամենայն արարքը արքային իմացնելու։ Տարակոյս չկայ թէ Սասանեանք որ յամենայնի Աքեմենեանց նմանողք էին, այդ գրութիւնը իրենք ալ գործածողք են։

3. Այդպիսի դպրապետ և դէտ մի այլ ըլլալու էր անշուշտ Ասպահապետին՝ այս է այրուծիոյ հրամանատարին քովը, որում կ'ըսուէր՝ Ասպարաքան անդարձապետ։

Վերը գրուած Եղիշի երկրորդ հատածին մէջ Վասակայ հետ խօսակցող մոգպետը Մովպետան մովպետէն ետքը զդեր-անդարձապետը կը յիշէ. քանզի մոգաց անդարձապետ կամ ի Հայս խրկուած էր մոգուց խմբիկն ետևէն, մազդեզն դերն անդ հաստատելու համար, և կամ յԱպար աշխարհ կը գտնուէր. վասն որոյ մոգպետը անդարձապետին փոխանորդին՝ դեր-անդարձապետին կը գրէ։

Ուստի ըստ մեզ, մոգաց անդարձապետութիւնը կրօնական կամ կղերական աստիճան

1. Պէտք չէ կարծել սակայն որ բարդութեանց մէջ անպատշաճ յաւելումը հայերէնի յատուկ ըլլայ. « Գեհնպետ » զոր պարսկերէն Աքաճ, որպէս և Ալաճ։

2. Վագանուիս. Վագի և բառ արաբացի. ամենքը մէկէն նոր պարսկերէն բարբոթիւն։

մի չէր դենպետին և մոգպետաց մէջտեղը, որպէս կարծէ Պ. Ճ. Տարմէսթէթէր, այլ վարչական պաշտօն մի:

Այժմ գառնանք, հանդերձապետ անուան, զոր Ս. գրոց Թարգմանիչն է կիր առած են: Մեզ կ'երևի թէ նոյն պարսկերէն բառն է՝ հայացեալ: Անդարձապետն յետ սատրապից, նահանգաց մեծագոյն պաշտօնատարըն էին: Հաւանական է ալ որ Հայոց հարկատու եղած ատենը՝ անոնց ալ անդարձապետ մը խրկուած էր. և ասանկով հազարապետութեան կամ երկրորդ իշխանութեան գազափարը կցեցաւ այդ անուան. և որովհետեւ պահ լաւիկ և այլ օճմական դպրութեանց մէջ սուղ ձայնաւորք չեն դրուիր, անդարձապետը անդերձապետ ալ կը կարդացուէր. և մ'ալ աւելնալով եղաւ հայերէն բառ, առանց սա կայն՝ ըստ բառական ստուգարանութեան՝ պատշաճեալ իմաստին:

Օտար բառի մը ընդի լեզուի կերպարանօք դիմակաւորին՝ ամէն ազգաց մէջ տեսանելի է. այդ տեսակ ուրիշ բառեր ալ կան մեր լեզուին մէջ, որոցմէ յիշեմք մէկը, Շահաստան. « Պանձակ շահաստան, Նիւշապուռ շահաստան, Բահլ շահաստան, Շահաստան Դուին »: Ոմանք զայս կը մեկնեն՝ վահառաշահ քաղաք՝ իրրեւ զուտ հայերէն. այլք՝ արքայանիստ, արքայավայել կամ Շահի քաղաք: Մինչ ոչ այս է ոչ այն, որ շահրիստան: Պարսկերէն շահր, որ հին իշարրաս աշխարհ բառի ամփոփումն է, երկու նշանակութիւն ունի. Ա. աշխարհ. Էրան շահր, որ Թարգմանի Արեաց աշխարհ. Դրս Դ՛ Ապար աշխարհ՝ Բ. քաղաք: Բայց Ասորեստանայց քաղաք անունը զոր ընդունեցան Հայք, կը նշանակէր արդէն ամրացեալ քաղաք. մինչ շահր չուէր այդ իմաստը. վասն որոյ Պարսիք շահրիստան կ'ըսէին « մեծ և պարսպապատ քաղաքաց »: Երբ Փարպեցին ասէ « Նիւշապուռ շահաստան », եղիշէ կը Թարգմանէ « Դղեկ քաղաքն Նիւշապուռ », (էջ 249): — Այսպէս և եթէ ուզենք « Շահապետ » և « Շահապ » անուանց ինչ ըլլալը իմանալ, պէտք է հէն ետքը դնել ը բաղա-

ձայնը, ու յանժամ յայտնի կ'ըլլայ որ շահրապետ է աշխարհապետ (հինն իշարրասպատի, և շահրապ՝ յունարենէ մեզ անցած « սատրապ », Satrape, առաջնոյն կրճատեալը: Կ'երևի թէ հին Հայոց արտասանութիւնը ձայնաւորէ ետքը հր բաղաձայնքը չուզեր կից պահել. որպէս ի Շահպոսնր՝ արքայորդի, և յատուկ անուն: Պարսիկք ամփոփած են զայն ի Շապուր *Shapur*, իսկ Հայք ի Շապուռ:

6

Շահ խոռապետն արքունի, ուղղելի՛

Շահոռապետն արքունի.

Շահ խոռապետն, այլ ընթերցուած՝ շահապետն, շահախոռապետն. այժմ համարէն տպագիրք բաժանեն յերկուս բառս. Շահ՝ իբր յատուկ անուն, և խոռապետ՝ կուրապաղատ, իշխան յարքունիս, փոխանորդ արքայի, խօս պարսկերէն բառէ եղած համարելով, որ Թարգմանի պալատ, տուն արքայի: Արդ եթէ այդպիսի պաշտօնեայ մը եղած ըլլար, զահանամակաց մէջ նշանակուած պէտք էր լինել: Խոսքովայ գահնամակին մէջ կը տեսնենք՝ շահոռապետք. վասն որոյ պէտք չէ բաժանել զանունդ յերկուս: Բայց հնչէ շահոռապետը. անշուշտ շահր և պետ բառերու բարդութիւն՝ շահրապետ, զոր հայկական արտասանութիւնը, ինչպէս վերը ցուցուցինք, չուզելով հր տառերը քովէ քով բերել, ըրեր էր շահոռապետ: Շահոռապետն արքունի է վճարմայ գահնամակին մէջ՝ Գրեւ կարգն ունեցող « քաղաքապետն արքունի », որ անշուշտ վճարմայ հաստատած պարսկերէն բնագրին մէջ շահրապետ կամ շահրպետ ժողեալ էր:

1. Նախընթաց յօդուածոց մէջ քամի մի տպագրակամ սխալ ուղղելի եմ. երես 7. Դասաւորաց, ուղղ. Դասաւորաց. — Թուրանիկ ուղղ. Բաթալի. երես 81, Pavuryo dkaēsha, ուղղ. Paōuryo - dkaēsha. - Շահասակ, ուղղ. Ձեթակ. - Շու. Ctuiti ուղղ. Շու. Ctuiti.